

3 Kump

891. 99

U-27

1904

ЛЕТАРИИ ВСЕХ СТРАН, СОЕДИНЯЙТЕСЬ!

Валерий Р. Витковский
и другие
ЛЕТАРЬ

Л. В. Витковский

891.99
У-27

891.33

15-27

այս

Ա. ԱՍՆՈՒԷԵԱՆ

ՀԵՐԹ

Հրատարակութիւն Յ. ԶԱՐԻՖԵԱՆԻ



Թ Ի Ը Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Գրաֆսկայա փող.

1914

Къ постановкѣ пьесы на армянскомъ языкѣ подѣ
названіемъ „Сказка“, драма въ 1 дѣйствіе соч. М.
Мануэляна, на сценахъ Кавкаскаго края препятствій
со стороны комитета не встрѣчается.

Членъ Тифлискаго комитета
по дѣламъ печати

А. Калантаровъ

1910 г. 14 Августа

Настоящая пьеса подѣ заглавіемъ „Сказка“ драма
въ 1 дѣйств. соч. М. Мануэляна разрѣшена Намѣс-
тникомъ Его Императорскаго Величества на Кавказѣ
для представленія на сценахъ края.

И. Д. предсѣдателя комитета (подпись).

Секретарь (подпись)

печать



4071-36

Ներկայացման իրաւունքը վերապահւած է միմիայն դերատան
ԶարիՓեանին 1914 թ. Սեպտեմբերի 1-ից մինչև 1915 թ.

Սեպտեմբերի 1-ը:

Հ Է Ք Ի Ա Թ

Դրամատիկական էսքիզ 1 գործողութեամբ.

Ա. Ն. Զ. Ի. Ն. Թ.

ՆԱ պ. ԶԱՐԻՓԵԱՆ
ԿԻՆԸ տ. ԱԴԱՄԵԱՆ
ԴԱՅԵԱԿ տ. ԱԶՆԻԻ
Ա. ԾԱՌԱՅ պ. ԽՈՐԷՆ
Բ. ԾԱՌԱՅ պ. ԳԱՐԱԳԱՇ

Ծովափին. Սպիտակ մարմարեայ աշտարակի մի սենեակ,
փարթամ արեւելեան ճաշակով զարդարւած: Ներքեւից լսելի է
ջրերի ծայնը, որ զարկում է աշտարակի պատերին: Ճակատի
կողմը երեք լուսամուտ, միջին պատուհանը դուրս ընկած դէպի
ծովը, այնպէս որ սենեակում խորութիւն է ստացում: Թան-
կագին վարագոյրներով: Սենեակը զարդարւած է գորգերով,
ճաղիկներով: Աջ պատի մօտ թախտ՝ վագրի մորթով, մօտը
մի կլոր սեղան սեւ սաւառիով զարդարւած: Մուտքը ծախից:
Վարագոյրը բացելուց պատի մօտ լուռ կանգնած են եր-
կու ծառաները: Նրանք կարծես սպասում են մի բանի: Սե-
նեակը աղօտ լուսատււած է լուսնի լուսով:

Ա. ԾԱՌԱՅ

Իսկ եթէ չգայ:

Բ. ԾԱՌԱՅ

Կգայ:

Ա. ԾԱՌԱՅ

Գիտե՞ս նշանը:

Բ. ԾԱՌԱՅ

Գիտեմ:

Ա. ԾԱՌԱՅ

Ծովը հանգիստ չէ, դժւար թէ այսօր գայ: (Մի փոքր լռութիւնից յետոյ): Դու գիտե՞ս ով է նա:

Բ. ԾԱՌԱՅ

Ո՛չ:

Ա. ԾԱՌԱՅ

Ասում են դա նրա նախկին սիրահարն է, մի գեա-
ւուր:

Բ. ԾԱՌԱՅ

Եթէ ինձ տան այդ մարդուն, ես նրան կտոր-կտոր
կանեմ:

Ա. ԾԱՌԱՅ

Դու տես՞ր ինչ մռայլ էր մեր տէրը... Նա շատ է
տանջւում:

Բ. ԾԱՌԱՅ

Ես տեսայ ինչպէս նա լալիս էր: Քսան տարի է ես
ծառայում եմ այս տանը և առաջին անգամ տեսայ ինչ-
պէս նա լալիս էր: Նա շատ դժբախտ է: Նա շատ դաւաճ-
անք է ունեցել, բայց այժմ մէկն է մնում: Նա դողում է
նրա վրայ, նա այնպէս դժգոյն է: Նա թաղեց երկու որ-
դուն, թաղեց կնոջը՝ լաց չեղաւ, պողպատի սիրտ ունի:
Ես չէի կարծում, որ այդ հուժկու մարդը կարող է լալ.
բայց այսօր ես տեսայ ինչպէս նա լալիս էր:

Ա. ԾԱՌԱՅ

Երեւի շատ է սիրում:

Բ. ԾԱՌԱՅ

Նրա ամբողջ կեանքը մի մութ դաժան գիշեր է եղել:
Նրան ոչ ոք չի սիրել... Բոլորը վախենում են նրանից:

Ա. ԾԱՌԱՅ

Նա այնպէս դաժան հայեացք ունի... Ես չեմ կարո-
ղանում ուղիղ նայել նրան:

Բ. ԾԱՌԱՅ

Նա շատ դժբախտ է: Ես նրան մի անգամ միայն
տեսայ ուրախ, երջանիկ: Նա երեխայի նման ուրախ էր...
Ես նրան երբեք այդպէս չէի տեսել:

Ա. ԾԱՌԱՅ

Ե՞րբ էր:

Բ. ԾԱՌԱՅ

Երբ առաջին օրը մեր նոր տիրուհին մտաւ այս տու-
նը: Այդ օրը նա ծառաների հետ էլ քաղցր էր... Լիքը
բոլոր արծաթ թափեց նրանց առաջ: (Լռութիւն):

Ա. ԾԱՌԱՅ

Որտե՞ղ էր նա պատահել տիրուհուն:

Բ. ԾԱՌԱՅ

Չըզիտեմ... Դա երկար պատմութիւն է... Ասում են
նա սպանել է նրա սիրածը, որը կամեցել է փախչել
նրան ուրիշ երկիր... Նա վաղուց աչք է ունեցել նրա
վրայ: Դա մի հայի աղջիկ է:

Ա. ԾԱՌԱՅ

Հայի աղջիկ:

Բ. ԾԱՌԱՅ

(Յանկարծ): Մօ... Լուռ... Լսեցի՞ր:

Ա. ԾԱՌԱՅ

Ոչինչ:

Բ. ԾԱՌԱՅ

(Լսողութիւնը լարած): Մօ...

(Յաճից մեղմ սուլոց)

Բ. ԾԱՌԱՅ

Նա է:

Ա. ԾԱՌԱՅ
Իջեցնեմ:
Բ. ԾԱՌԱՅ
Սպասիր:
(Սուպոցը կրկնում է)
Բ. ԾԱՌԱՅ

Իջեցրո՛ւ... զգոյշ, չերկաս:
Ա. ԾԱՌԱՅ

Մռթ է:
Բ. ԾԱՌԱՅ

Կամաց... ս... ս...
(Մի պահ լռութիւն: Իջեցնում է շանը, որի մի ծայրը
ամրացրած է պատուհանի վանդակին):

Բ. ԾԱՌԱՅ

Դանակը ձեռքի՞դ է:
Ա. ԾԱՌԱՅ

Այո: (Լռութիւն): Բռնեց չւանը... Բարձրանում է:
Բ. ԾԱՌԱՅ

Մ... Լուռ: (Լռութիւն. լսում է ջրերի ձայնը):
Ա. ԾԱՌԱՅ

Թողնեմ բարձրանա՞յ:
Բ. ԾԱՌԱՅ

Կասեմ— երբ:
Ա. ԾԱՌԱՅ

Մօտենում է:
Բ. ԾԱՌԱՅ

Շատ կայ:
Ա. ԾԱՌԱՅ

Քիչ փաց:
Բ. ԾԱՌԱՅ

Կտրիր... Դէհ...
Ա. ԾԱՌԱՅ

Ձեռներս դողում են:
Բ. ԾԱՌԱՅ

Շուտ:

Ա. ԾԱՌԱՅ
Ես չեմ կարող...
Բ. ԾԱՌԱՅ
Վախկոտ... տուր ինձ: (Վերցնում է դանակը եւ մի
հարածով կտրում):

Ա. ԾԱՌԱՅ
Արդէ՛ն:

Բ. ԾԱՌԱՅ
(Մօտենում է պատուհանին): Հա՛, հա՛, հա՛... Վեր-
ջացաւ... Թող չանգրտի քարափը... Նա ջարդեց սուր, սե-
ժայռերի վրայ... Վառիր ջահը:

Ա. ԾԱՌԱՅ
(Վառում է: Մուտքի դուռը ծեծում են):

Բ. ԾԱՌԱՅ
Ո՞վ է:

ԴԱՅԵԱԿ
(Դրսից) Ի՞նչ եղաւ:

Բ. ԾԱՌԱՅ
Վերջացաւ: (Բանում է դուռը):
(Ներս է մտնում մի պառաւ, մէջքը կորացած, խօսում է
խռպոտ):

ԴԱՅԵԱԿ
Վերջացաւ... խի՛... խի՛... խի՛... Վերջացաւ... լաւ:

Բ. ԾԱՌԱՅ
Սի բան իմացա՞ք:

ԴԱՅԵԱԿ
Ո՛րինչ... Լուռ է, կասես պողպատից է ձուլւած... Ոչ
մի հաւաչանք, ոչ մի կաթիլ արցունք... Այս չորացած
մատնելով ես նրա աչքերը կըհանէի... Սանդի մէջ
կը ջախջախէի նրա պիղծ մարմինը... ոչ մի տանջանք
չը բացցնէ նրա լեզուն...

Բ. ԾԱՌԱՅ
Զիւացա՞ք ով է:

ԴԱՅԵԱԿ
Ոչ:

Ինչպէս է մեր տէրը:

ԴԱՅՅԱԿ

Նա դեռ սիրում է նրան, այդ շան աղջկանը. ինչպէս կրպոկոտէի նրա մսերը, ինչ մեծ հրճանքով կրկրծէի նրա կոկորդը, որ ցաւից աչքերը դուրս պրծնէին, որ առաջներէ տակ խածնէր իր լեզուն... (Ժամածուած դէմքով): Ես կըխմեմ նրա արիւնը... Ասա... ասա... ասա... ինչ միջոցով կարելի է նրան աւելի տանջել, աւելի չարչարել... (Կատաղութիւնից կրծոտում է մատները):

Բ. ԾԱՌԱՅ

Աւելի լաւ էր նա ոչինչ չիմանար... Ոչինչ... չը պէտք էր ոչինչ ասել... Ծովափից կը գնդակահարէինք այդ շանը...

ԴԱՅՅԱԿ

(Խոժոռ նայում է նրան. ուզում է մի քանի ասել, այդ րոպէին դուռը բացում է. շէմքի վրայ նրեւում է ՆԱ. Նրա արիւնով լիք աչքերը փայլում են: Աչքերի կրակո կարծես ծաղրում է գլխի ձերմակը: Մօտ 60 տարեկան: Խստադէմ, մոայլ: Մի վայրկեան լուռ կանգնած է տնկերում, մի հայեացք է ձգում նրկու ծառաների վրայ, շրոնք լուռ, ձեռները կրծքին կանգնած են: Մի քսակ փող է նետում նրանց: Ա. ծառան վերցնում է եւ նրկուան կ լուռ դուրս են գնում):

ՆԱ.

Ի՞նչ եղաւ:

ԴԱՅՅԱԿ

Արդէն:

(Ծառաները գնալուց յետոյ Նա մի քանի անգամ անց ու դարձ է անում սենեակում, մօտենում է պատուհանին մի վայրկեան լուռ նայում է հետուն: Ապա մօտենում է վարդի մորթով ծածկած թախտին՝ ընկնում է նրա վրայ, ծանր հեւում է, որը մի քիչ անց փոխում է լուռ հեծկտանքի: Դայնակը, որ կանգնած պատի մօտ լուռ հետեւում էր նրան աչքերով, մօտենում է եւ ծունկ չորում նրա առաջ):

ՆԱ.

Նա ինձ երբէք... երբէք չի սիրել... իմ ամբողջ անիծեալ կեանքը մի մուկ գիշեր էր... իմ արեւ ծագեց՝ երբ նա ոտ դրեց այս տունը, և այդ արեւը նորից մայր է մտնում... Այժմ անթափանձելի խաւար է շուրջս:



(Տես երես 8)

ՆԱ. — Ի՞նչ եղաւ.
ԴԱՅՅԱԿ. — Արդէն.

ԴԱՅՅԱԿ

Հրամայիր, և նրա արեւը յաւիտեան կըխաւարի:

ՆԱ.

Կը խաւարի նրա արեւը, կը խաւարի և իմը. առանց նրան ես անկարող եմ ապրել:

Մահւան է արժանի նա, ով գողանում է իր տիրոջ պատիւը:

ՆԱ

Մահը փրկութիւն կըլինի նրա համար: Ոչ, նա պէտք է ապրի:

(Հերարծակ, դիակի պէս դժգոյն ներս է մտնում ԿինՆԸ. նա մօտ 20 տարեկան է: Վազում է դէպի պատուհանը, սարսափած շուրջն է նայում, նայում է պառաւին, որը նրա մոնելուց վեր է կացել եւ կանգնած է պատի մօտ: Արագ մտանում է ամուսնուն եւ ծնկաչոք ընկնում է նրա առաջ. ուզում է մի քան ասել. ջրթունքները շարժում են, բայց ոչինչ չի կարողանում արտասանել: Նա հրում է կնոջը եւ ոտքի կանգնում):

ԿԻՆԸ

Ասացէք, ի՞նչ արիք դուք նրան: Ո՞ւր է նա:

ՆԱ

Հա... հա... հա...

ԴԱՅԵԱԿ

(Արձագանքի պէս): Խի... խի... խի...

ԿԻՆԸ

Դուք այժմ գիտէք թէ ով է նա... էլ ինչո՞ւ էք կանգնել, սպանեցէք ինձ... Սպանիր... բայց թող մի անգամ էլ նայեմ նրան, յետոյ սպանիր:

ՆԱ

(Չուքերը կրծքին լուռ կանգնած է):

ԿԻՆԸ

Տեսնում ես, որ ես քեզ դաւաճանել եմ: Տեսնում ես, որ ես երբէք քեզ չեմ սիրել և չեմ էլ սիրելու: Սպանիր... վաղիր, կամ ոչ՝ իբրեւ բարի հայր տուր ինձ նրան ու թող մեր երջանկութիւնը լինի և՛ քո երջանկութիւնը: Ես քեզ կըսիրեմ ինչպէս իմ հարազատին, կըպաշտեմ

ինչպէս աստածութիւն... Տուր ինձ նրան, տուր, ծնկաչոք ոտներդ ընկած աղաչում եմ... տուր ինձ նրան... (Հեկեկում է):

ՆԱ

Պոռնիկ... Դու աւերակ դարձրիր այն տաճարը, որի աստածը ինքդ էիր... Դու չմոռացար այն շուն գեաւու-



ՆԱ — ...այնքան ծեծէ ավերել իր այլանդակւած, ուսած մարմնով
մինչև քրքայով (Տես էջեր 12)

րին, որից ես քեզ իլեցի: Ես պաշտում էի քեզ ինչպէս աստածութիւն...

ԿԻՆԸ

Նրան... Այո, դու իլեցիր ինձ նրանից: Ես էլ նրան էի պաշտում... Ես նրան սիրում էի... սիրում եմ և այժմ...

իմ յիշողութեան մէջ դեռ վառ է նրա պատկերը: Ես նրան այժմ էլ սիրում եմ. սիրում եմ ինչպէս աստղերին, որոնց երբեք չեմ կարող հասնել. ես նրան սիրում էի ինչպէս այն սարի զագաթի մշտական ձիւնը, ինչպէս այս ծովի ջրերի ձայնը, որոնց լսում էի իմ մենակութեան մէջ, իմ երջանկութեան ժամերին, հեռու քո ատելի հայեացքից: Քո տաճարը—բանտ էր ինձ համար. իսկ դու միթէ չը խորտակեցիր իմ տաճարը: Դու խլեցիր ինձ իմ սիրածի գրկից, և երեք տարի զարշելով ես քոնն եմ եղել, դու թունաւորել ես իմ ամբողջ երիտասարդ կեանքը. ես բոլորը, բոլորը ներում եմ քեզ, միայն տո՛ւր ինձ նրան:

ՆԱ.

Նրան տամ քեզ... Հա՛... հա՛... հա՛... Պառաւ, լսո՛ւմ ես... Ո՛ւր է նա, թող դուրս գայ... Թող տանի իր սիրածը... հա՛... հա՛...

ԴԱՅՆԱԿ

(Շարունակելով): Հա՛... հա՛... հա՛... (Առաջ գալով, կնոջը, շշուկով): Խի՛... խի՛... խի՛... հա՛, հա՛ այնտեղ է... (Յոյց է տալիս ծովը): Լողում է:

ԿԻՆԸ

(Չհասկանալով): Այնտե՞ղ է... (Վազում է դէպի պատուհանը, ապա յետ է դառնում, նայում է մերթ պառաւին, մերթ ամուսնուն, հասկանալով, ընկճած ընկնում է):

ՆԱ.

(Վայրենի ջրբիջով): Այնտեղ... հա՛ լողում է իր արիւնով ներկւած կարմիր ծովի մէջ: Երբ նրա պիղծ դիակը ծովը ափ կը շարտի, ես կը հրամայեմ, որ կրկին ծովը նետեն. հա՛ պէտք է այնքան ծեծի ափերը իր այլանդակւած, ուռած մարմնով մինչև քայքայւի:

ԿԻՆԸ

(Կարծես չի հաւատում իր լուսններին, կարծես երազ է, նա կծոտում է ձեռները, շօշափում է մազերը, կարծես, համոզելու համար, որ երազ չէ: Աչքերը լայն

բացած խելագարի պէս՝ ուզում է ոտի կանգնել, քայց ընկնում է: Շշուկով): Դո՛ւք սպանեցիք նրան... Դո՛ւք...

ՆԱ.

Այժմ դու իմն ես... իմը... միակ իմը... հա՛... հա՛... հա՛...



ՆԱ.—...եւ կը ծծեմ քո շրթունքների կարմիր հիւթը, որ նեկտարից աւելի անուշ է .

(Տես երես 14)

ԿԻՆԸ

(Եանկարծ ոտի է կանգնում, վազում է դէպի պատուհանը, քայց նա ընկնում է նրան եւ ուժով պահում: Յուսահատ ծիգ է անում ազատելու եւ չի կարողանում):

ՆԱ

Ոչ, դու կապրես, ես ամեն անգամ ուժով կըխլեմ քո այտերից համբոյրները: Ես կըծծեմ քո շրթունքների կարմիր հիւթը, որ նեկտարից աւելի անոյշ է, կըծծեմ քո արիւնը՝ մինչև թառամես, թօշնես և ոտնահար եղած ծաղկի պէս դէն կըշարտեմ: Շղթայակալ շներիս հետ կը պահեմ... Իսկ դիակդ... դիակդ անգղներին կեր կըտամ:

ԿԻՆԸ

(Որ սարսափած լսում էր նրան, կամաց-կամաց կանգնել է: Նրա վերջին խօսքերի վրայ սառած է ամբողջ հասակով, աչքերը կատաղութեամբ վառւում են): Վագր... Բորենի... Դէ՛հ լսիր... Այժմ ես կըլուծեմ իմ վրէժը... Երեք տարի դու տանջել ես ինձ, այժմ դու երեք տարւայ տանջանքների փոխարէնը տոկոսով կըհատուցանես... Դէ՛հ, լսիր... Նա քո որդին էր...

ՆԱ

(Կարծես չըհասկացաւ):

ԿԻՆԸ

Նա քո որդին էր... քո միակ որդին:

ՆԱ

(Յարձակւում է կնոջ վրայ): Ես կըխեղդեմ քեզ... (Թուլացած ընկնում է):

ԿԻՆԸ

(Մի քայլ յետ է գնում): Անարգ, ես լուծեցի իմ վրէժը և նրա վրէժը, որ կըծում էր սիրտս:

ՆԱ

Պառա՛ւ... պառա՛ւ...

ԴԱՅՆԱԿ

(Մօտեցել է եւ չոքել նրա առաջ):

ԿԻՆԸ

Դու խլեցիր իմ սիրածը, ես էլ խլեցի որդուդ: Դու թունաւորել ես իմ տարիները քո պիղծ շնչով, դու ստիպել ես ինձ շոյել քո ատելի դէմքը, որից ես գարշու՛մ էի. քո նողկալի շրթունքները քանի անգամ հպել են իմին,

եւ բոլորը տարել եմ լուռ, անձայն այս բոլէի համար... Ես վրէժս առի... այժմ սպանիր:



ԿԻՆԸ.—Նզոված լինես որդեսպան... Ես վրէժս առի:
Աստուած... Աստուած... (Տես երես 16)

ՆԱ

(Պառաւի օգնութեամբ ոտի է կանգնել. պառաւը նրան մօտեցրել է թախտին. մի վայրկեան լուռ, ընկճւած նստած է: Աղաչելով): Ասա՛, ասա՛, որ դու սուտ ասացիր, ասա՛, որ դու վրէժ էիր ուզում առնել:

ԿԻՆԸ

Նա քո որդին էր... Թող բերեն դիակը...

(Արիւնը խփեց զլիւն. կատաղած): Յետ տուր, յետ տուր ինձ որդուս:

ԿԻՆԸ

Հա... հա... հա... Ուշ է... այլևս երբէք չես տես-
նելու նրան, նա լողում է իր արիւնով ներկած ջրերում,
ժայռերը սուր-տուր մեխւել են նրա կողերը, և դու, դու
ես նրա դահիճը...

ՆԱ

Պառաւ... Սղմիր, սղմիր նրա կոկորդը, փակիր նրա
բերանը...

ԿԻՆԸ

Նրա ուռած դիակը կըծեծի քո մարմարեայ աշտա-
րակի պատերին և քո լսողութեանը շարունակ կըշնջայ
նրա անէծքը: Որդեսպան... քնած թէ արթուն նա կըհա-
լածէ քեզ և դու ոչ մի տեղ հանգիստ չես գտնիլ և շա-
րունակ կըլսես՝ «Որդեսպան... որդեսպան»... Այդ մեղե-
դին գերեզմանումն էլ քեզ հանգիստ չի տալ... Հըէշ...
Բորենի... Դէհ, այժմ սպանիր ինձ...

ՆԱ

(Կատաղած վեր է ցատկում, խլում է կողքի կեռ սու-
րը եւ մի հարաժող պատուո՞ւ է կնոջ կուրծքը): Հա... հա...

ԿԻՆԸ

Նզոված լինիս... որդեսպան... ես վրէժս սուի... Աստ-
ւած... Աստւած... (Մեռնում է):

ՆԱ

(Վայրենի քրքիջով ընկնում է յատակի վրայ, հայաց-
քը սառած է մի կէտի: Պ ա ու զ ա):

ԴԱՅԵԱԿ

(Ոտի է կանգնում: Կարծա քրօնգից է ծուլած: Ան-
թարթ նայում է ուղիղ տարածութեան մէջ: Խուլ ձայ-
նով, կարծես գերեզմանից է լսում) Լինում է—չի լինում
մի իշխան. նրա ամբողջ կեանքը մի մութ դաժան գիշեր
էր: Նա միայն մի անգամ էր ժպտացել: Նա շատ որդիք
ուներ, բոլորն էլ մեռան. միայն մէկն էր մնում, նրան
էլ ծովը նետեց: Մի կին միայն սիրեց, նրա կուրծքը
պատուեց իր կեռ սրով:

Կամաց-կամաց իջնում է վարագոյրը:

Handwritten signature

Շառնոն Գ. Շառնոն
Ս. ԿԱԺՈՒԱՆ

<< Ազգային գրադարան



NL0350464

20 ~



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՒԼՈՒՄԻՆԱԿԱՆ ԳՐԱԳԵՐ

ԳՐԱԳԵՐ 50 Գ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՒԼՈՒՄԻՆԱԿԱՆ ԳՐԱԳԵՐ



42027